ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի ելույթը 2014թ. դեկտեմբերի 15-ին Երեւանում հրավիրված՝ «Մարդու իրավունքների եվրոպական չափանիշները եւ Եվրոպական դատարանում կառավարության լիազոր ներկայացուցչի դերը մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման հարցում» խորագրով միջազգային համաժողովում

Միջազգային համաժողովի հարգարժան մասնակիցներ,

Տիկնայք եւ պարոնայք,

Կարեւորում եւ ողջունում եմ այս համաժողովի հրավիրումը եւ շնորհավորում եմ բոլորիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցչի ինստիտուտի գործունեության տասնամյակի կապակցությամբ:

Ես կանխամտածված չշեշտեցի «կառավարության լիազոր ներկայացուցչի ինստիտուտ» արտահայտությունը, որովհետեւ նման ձեւակերպմամբ, մեր կարծիքով, էապես նեղացվում են ինստիտուտի առաքելության բնույթն ու բովանդակությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կողմը երկիրն է, վճիռն ընդունվում է ընդդեմ երկրի, եւ կողմին ներկայացնողը հանդես պետք է գա երկրի անունից, երկիրը ներկայացնելու մանդատով ու պատասխանատվությամբ: Մեր ներկայացուցչի պարագայում, թերեւս, մոտեցումը հենց այդպիսին է:

Երկրորդ կարեւոր հանգամանքը, որ կցանկանայի շեշտել, հետեւյալն է. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ է սահմանված /հոդվ. 18/, որ «Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին»: Նման հնարավորությունը, իր հերթին, հիմնված է մեր երկրի սահմանադրական արժեքանության այն հիմնարար մոտեցումների վրա, որ Հայաստանի Հանրապետությունը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում սահմանադրորեն գերապատվությունը տալիս է

միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին /մասնավորապես՝ հոդվածներ 3, 18, 43/:

Սահմանադրական նման մեթոդաբանությունը համարժեք խնդիրներ է առաջադրում արդարադատական ողջ համակարգին, պահանջում է ոչ միայն գործադիր իշխանության, այլեւ պետական բոլոր ինստիտուտների ու քաղաքացիական հասարակության համարժեք վերաբերմունքը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առաքելության եւ դատարանի նախադեպային իրավունքի նկատմամբ: Ուստի պետության մասնակցությունը վերպետական մակարդակում մարդու իրավունքների պաշտպանությանը **ոչ թե պետք է դիտարկել ինքնաարդարացման վարքագծի դրսեւորման տեսանկյունից, այլ ընդունել որպես մարդու իրավունքների պաշտպանությունը լիարժեք երաշխավորելու եւ իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվելու հանձնառություն:** Այս մոտեցումը որդեգրելով՝ մենք կկարողանանք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը դարձնել մեր երկրում մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության կարեւոր նախադրյալ:

Հենց նման նպատակ էինք մենք հետապնդում, երբ 2007 թվականին Եվրոպական դատարանի կողմից Հայաստանի դեմ ընդունված առաջին վճռի շնորհանդեսը կազմակերպեցինք սահմանադրական դատարանում: Կարծեմ, սա եզակի օրինակ է: Դրա խորհուրդն այն էր, որ ցանկանում էինք շեշտել մարդու իրավունքների պաշտպանության նոր երաշխիքի իրացման փաստը: Դրանից հետո մեր երկրի դեմ շուրջ հինգ տասնյակ վճիռներ են կայացվել: Արդյոք կարողացել ենք անհրաժեշտ հետեւություններ անել: Արդյոք մեզանում մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության համակարգը հասել է ցանկալի արդյունքների: Հարցեր, որոնց պատասխանները կարող են հնչեցվել նաեւ այս խորհրդաժողովի ամբիոնից:

Սակայն պարզ է մի բան՝ մեր իրավակիրառական պրակտիկան շատ հաճախ է անդրադառնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային

իրավունքին: Ես անձամբ դա համարում եմ անհրաժեշտ, բայց ոչ բավարար: Մեզ առավել քան անհրաժեշտ են արդյունավետ քայլեր հատկապես իրավունքի գերակայության երաշխավորման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների ամբողջական իրացումը երաշխավորելու համար: Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականները, Խորհրդարանական վեհաժողովի ընդունած բանաձեւերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի զեկույցները՝ իրավունքի գերակայությունը լիարժեք երաշխավորելու համար անհրաժեշտ է, մասնավորապես, որպեսզի մեզանում.

- պետությունն իրավունքի ուժով պոզիտիվ պարտականություն կրի մարդու արժանապատվության, նրա իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հարցում և ստանձնի համարժեք հանրային-իրավական պատասխանատվություն,

- հիմնական իրավունքներին ցանկացած միջամտություն և իշխանության ցանկացած գործողություն բխեն համաչափության սկզբունքից,

- արդարադատությունը լինի առավել անկախ ու անկողմնակալ,

- լիարժեք երաշխավորվի իրավական օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը,

- օրենքները և այլ իրավական ակտերն առավել մեծ չափով համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, լինեն կանխատեսելի, հստակ, զերծ՝ բացերից ու երկիմաստություններից,

- իշխանության իրականացումը խարսխված լինի գործառույթների և լիազորությունների հստակ ներդաշնակումը երաշխավորելու վրա,

- հանրային իշխանության իրականացման հիմքում բացառապես ընկած լինի օրինականության սկզբունքը,

- իրավական պետության չափորոշիչներին համապատասխան երաշխավորվի կամայականության արգելքի սկզբունքը և առավել հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները:

Այս բոլորի իրականացման համար մեզանում թե' սահմանադրական, թե' օրենսդրական եւ թե' կառուցակարգային բնույթի շատ խնդիրներ դեռեւս պետք է լուծվեն:

Համոզված եմ, որ այդ խնդիրների լուծման գործում նույնպես մեզ մեծապես կարող են օգնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հարուստ փորձն ու դատարանի նախադեպային իրավունքի խելամիտ իրացումը մեր իրավական համակարգում: Պարզապես հղումներն այդ դատարանի վճիռներին մեր իրավաստեղծ ու արդարադատական պրակտիկային քիչ բան կարող են տալ: Էականը՝ դատարանի հարուստ ու համաեվրոպական փորձառության վրա խարսխված իրավամտածողությունը մեր իրավական համակարգին ներդաշնակելն է: Այս պարագայում, կարծում եմ, մեր համագործակցությունը եվրոպական այս հեղինակավոր կառույցի հետ առավել շահեկան ու արդյունավետ կլինի:

Շնորհակալություն ուշադրության համար: